

## Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն

ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

(խօսուած Գեորգեան ձեմարանի արեղարձին)

Այս օրը դպրոցական կրթական մի տօն է. միանգամ ևս առիթ ենք ունենում հոգեպէս վերապրելու այն շրջանը իր մէջ պարունակուած հոգեկան աշխատանքների գեղեցկութեամբ, որոնց արդիւնքը եղաւ հայկական կեանքի համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող այս հաստատութեան հիմնարկութիւնը. Տօնի հիմունքը կըրթականը լինելով, պէտք է տեղին նկատուի խօսել մի խնդրի մասին, որը ունենալով զուտ կրթական բնաւորութիւն՝ անմիջօրէն կապուած է ձեմարանի և Գեորգ կաթողիկոսի ձգտումների հետ:

Կրթական խնդիրը հասարակական կեանքի մէջ եղող կարևորագոյն և յայտնի մտքերի զբաղեցնող հարցերից մէկն է եղել և դեռ կայ. Եւրոպական երկրները, որոնք մեզ պէտք է իդէալ ծառայեն, խորապէս ազդուած են այդ խնդրի կարևորութեամբ և օրերի մէջ անգամ նկատելի է այդ խնդրի բարեփոխմանը վերաբերող աճող ջանքերը. Եւ իսկապէս, ինչպէս կարող էր Գերմանիայի պէս մի երկիր իր զբաղման առաջին հոգսը կրթականը չը դարձնել, քանի որ նրան յայտնի մտածողներից մէկին է պատկանում այն դարձուածքը, թէ տուէք ինձ կրթական գործը և ես շուտով կը փոխեմ Եւրոպայի խարակտերը. Կամ կարող էր այդ երկիրը սառնարիւն մնալ, գործնականին չանցնել, երբ խօսում է ներկայ հռչակաւոր մի տնտեսագէտ, թէ տնտեսական ընթացքները ոչինչ են, եթէ դրանց հիմքը կրթականը չի կազմում, թէ հասարակական կեանքի նորմալութեանը նպաստող ամենաէական հանգամանքը կըրթական գործն է:

Այս յայտնիների յայտարարութիւնները չեն միմիայն, որոնք կը հաստատեն կրթական խնդրի մեծ նշանակութիւնը, այլ մի թուուցիկ հայեացքը պատմական և ներկայ

հասարակական կեանքի վրայ մեզ կը բերէ այն եզրակացութեան, թէ ի՞նչ մեծ հասարակական նշանակութիւն ունի կրթական-դպրոցական խնդիրը:

Պատմութիւնը մի ութեղ գնացք է մարդու հոգեկանի մէջ որոշ ունակութիւնների մաքրման կուլտուրայի մէջ, զարգացման ճանապարհով: Զգայական-հոգեկանը ձգտում է մաքրուել գեղարուեստի, գիտութեան, կրօնի և մարդկային ձիրքի այլ կերտուածքների մէջ և եթէ մի թեթև հայեացք ձգենք պատմութեան և ներկայի վրայ, կամրանանք վերոյիշեալ եզրակացութեան մէջ: Ներկայի մարդը հարստացած իր կուլտուրական ժառանգութիւններով իր հայեացքն է ուղղում դէպի մութ, անորոշ հեռուն և լըցւած եկող շրջանների աւելի բարձր կուլտուրականութեամբ, կամենում է անցեալի և իր ստեղծագործութիւնը տեղեցնել ժամանակի մէջ, եւ այդ կուլտուրական բեռներ տեղափոխելը առանց կրթական ճանապարհների անկարելի է: Ժառանգութիւն ստանում է միմիայն երկրորդ նորածող սերունդը, իսկ այդ սերունդը կը վատնի այդ ժառանգութիւնը, եթէ նրան կրթական միջոցներով չեն հասցրել այն հոգեկան բարձրութեանը, որ կուլտուրա շարունակել կարողանայ:

Ոչ միայն կուլտուրայի խնդիրը, այլ և մարդու հոգեկանի մէջ ապրող տրամադրութիւնները մարդկային ցեղի համար էական են դարձնում կրթական հարցը: Մարդը նոր սերնդի մէջ տեղնում է ոչ միայն իր ֆիզիքական գոյութեան շարունակութիւնը, այլ և իր հոգեկանի: Իր հոգու բովանդակութիւնը նա ցանկանում է տալ նոր սերնդին, իսկ նոր սերունդը մեծերի բարգ հոգեբանութիւնը իւրացնել կարող է միմիայն այն ժամանակ, երբ նրան տուել են համապատասխան կրթութիւն:

Հասարակութիւնը հէնց իր սեփական շահերը ի նկատի առնելով անկարող է անտարբեր լինել դէպի դպրոցական խնդիրները, քանի որ հին սերունդը բաւականին երկար ժամանակ հարկադրուած է լինում տարել և գործել նոր աճող սերնդի հետ, ուրեմն և հասկանալի պէտք

է լինի, որ նոր սերնդին այնպէս պէտք է կրթել, որ իր էութեամբ բացարձակ հակադիր չը լինի անցեալին, որ երկու սերնդների միասին կեանքը հնարաւոր դառնայ:

Եւ վերջապէս նոր սերունդը իր գոյութեամբ անգիտակցօրէն պարունակու՞մ է իր մէջ բարոյական այն պահանջը, որ պէտք է մեծերը իրեն գոյութեան կռուի համար զէնքեր տան:

Այս խնդիրները միացած էական են դարձնում կրթութութեան խնդիրը և դրանով պէտք է բացատրել այն մեծ ջանքերը, որոնք գործ են դնում եւրոպական երկրներում դպրոցներով երկիրը ցանցելու համար: Պէտք է խոստովանուել, որ մեր հասարակութեան մէջ ընդհանրապէս կրթական խնդրի անհրաժեշտութիւնը գիտակցու՞մ է: Սակայն ցաւալին այն է, որ դպրոցական գործը դեռ անկազմակերպ լինելով, ժողովուրդը տնտեսապէս ընկած դրութեան մէջ գտնուելով, մինչև այժմ մեզ չի յաջողուել բարեկարգել դպրոցները՝ ազատելով նրան իրենց բազմաթիւ պակասաւոր կողմերից: Մեր դպրոցական կեանքին ծանօթ եղողը պէտք է պնդէ, որ մեր դպրոցները կարգին ծրագիր չունին, որ եղածն էլ կարգին չի կիրառու՞մ, որ դպրոցական աշխատանքների ժամանակ չեն գործադրու՞մ ցանկալի մեթոդներ, որ դպրոցական աշխատանքների տուած հետեւանքները աւելի քիչ են, քան կարելի էր սպասել, որ դպրոցները մի մի անկապ կզգիններ են, որոնք չունին ներքին կապ, չեն հիմնու՞մ որոշ, ընդհանուր իդէաների վրայ, որ բացակայու՞մ է մարմնական կրթութիւնը, որ դպրոցական դասաւանդմանը նպատակ պիտոյքները շատ չնչին տեղ են բռնում և այլն և այլն: այս թուելը մեզ հեռուն կը տանէր, հանրածանօթ իրողութիւն է այդ բացասական կողմերի շարքերը:

Այստեղ ես կը ցանկանայի խօսել մի մեծ պակասի մասին, որը յատուկ է մեր դպրոցներին, չենթադրելով սակայն, որ այդ պակասի վերացմամբ ամեն ինչ արուած է, ինչ վերաբերու՞մ է դպրոցական թեփոքմանին, այլ միմիայն հաւատացած լինելով, որ այս պակասի վերացումը

մեր դպրոցների կեանքի մէջ շատ մեծ փոփոխութիւններ կառաջացնէր։ Այդ մեծ խնդիրը-ուսուցիչների մասնագիտական պատրաստութեան խնդիրն է։

Կեանքի մէջ մի գործ կատարելու համար մի որոշ մասնագիտական կրթութեան պահանջ է դրում, այլապէս անհնար էր, առանց գործի մասնագիտացման անկարելի է երեւկայել կուլտուրական բարձր ձևեր։ Կեանքի մէջ ամենամանջան արհեստաւորից անգամ որոշ նախապատրաստութիւն է պահանջուում. կոշկակարը կարող է վարպետ լինել և ինքնուրոյն գործեր վերցնել, եթէ նա արդէն երկար տարիների աշխատանքի քրտինք ունի թափած. գերձակը շորերի պատուէրներ է վերցնում, երբ ցերեկ-գիշեր տեղում նստած երկար ժամանակ իր մատերը յոգնեցրել է նոյնանման տեղը շարժումների միջոցաւ։ Առանց մասնաւորութեան, առանց գործունէութիւնը կենտրոնացնելու և նախապատրաստելու մենք չենք ճանաչում որ և է մեծ և դրական գործ կատարած կուլտուրական կեանքի մէջ։ Մեր հասարակութիւնը այդպիսի արհեստների վերաբերմամբ խստապահանջ է, սակայն պէտք է զարմանալ, որ նոյն հասարակութիւնը դէպի ուսուցչական պաշտօնը մասնագիտական պատրաստութեան մասին չունի այդպիսի խիստ վերաբերմունք։

Կարծէք, ուսուցչութիւնը այնքան մի թեթև պաշտօն է, որը հնարաւոր է առանց նախապատրաստական կրթութեան և վարժութեան դրական գործեր կատարել։ Ուսուցչութիւնը մի կոչում, մի պաշտօն է, ինչպէս ամեն մի պաշտօն և միւսներից տարբերուում է նրանով, որ սա աւելի դժուարին և բարդ մի կոչում է, որովհետև այդ կոչման զբաղման նիւթը հոգեկանն է, որի էութեան, օրէնքների, երևոյթների ճանաչողութիւնը գիտական աւելի մեծ պատրաստութիւն և հոգեկան աշխատանք է պահանջում։ Եւ ահա այսպիսի դժուարին մի գործ մենք տալիս ենք անվարժների, անփորձների ձեռքը։

Ուսուցիչը դպրոցի ոգին է, նրան տաքութիւն մատակարարող արևը և եթէ նա զուրկ է իր կոչումը գու-

նաւորելու յատկանիշներից, այն ժամանակ ոչինչ չեն կարող օգնել դպրոցը կարգաւորելու համար գործադրած ջանքերը, ոչ փողը, ոչ հոգաբարձութիւնը և ոչ էլ հասարակութիւնը: Էլ ինչ ուսուցչութիւն, եթէ չի իմացում ինչպէս պէտք է մտնել երեխայի հոգու խորքերը, նրան հետաքրքրեցնել, ոգևորել, ապրեցնել և դէպի առաջ գրգռել: Այս բոլորին հասնելու համար պէտք է մասնագիտորէն հետաքրքրուած լինել այդ երևոյթներին վերաբերող հարցերով:

Ուր պէտք է մտածել այդ ուղղութեամբ և ինչ հաստատութիւնների միջոցաւ պէտք է աշխատել վերացնել կամ թուլացնել այդ շարիքը, ոչ մի կասկած որ յատուկ ուսուցիչներ պատրաստող սեմինարիաների հաստատութեամբ: Սակայն բարեբախտաբար մենք ունենք հաստատութիւններ, որոնք իրենց գոյութեամբ վերացնում են նոր սեմինարիաներ հիմնելու հետ կապուած բազմաթիւ հոգսերը, դրանք մեր թեմական դպրոցներն են և ձեւարանը: Զարմանալի է, որ այդ հաստատութիւնների վարիչները մինչև այժմ չեն ցանկացել կեանքի յառաջադրած կարիքին բաւարարութիւն տալ: Եթէ այդ վարիչները կարգին հետաքրքրուէին, թէ իրենց դպրոցաւարտները յետոյ ինչով են զբաղւում, այն ժամանակ նրանք պարտաւոր պիտի լինէին իրենց դպրոցների կազմակերպմամբ բաւարարել իրենց սաների կարիքները: Մեր թեմականաւարտների իննսուն տոկոսից արեւին ուսուցչութեամբ է զբաղւում և հոգաբարձութիւնները, մանկավարժական խորհուրդները մինչև այժմ լուրջ փորձեր չեն անում թեմական դպրոցները յարմարացնելու կեանքին: Միանգամայն սխալ պէտք է ընդունել այն կարծիքը, թէ մեր թեմականները զուտ միջնակարգ դպրոցներ են:


Մեր թեմական դպրոցների պատմութիւնը և ներկանցոյց են տալիս, թէ որքան անհիմն է այդ տեսակէտի վրայ պնդելը: Միջնակարգ դպրոց սովորաբար կոչւում է այն հաստատութիւնը, որը անմիջական գործնական պահանջների բաւարարման մասին չէ հոգում, այդ տիպի

դպրոցի միակ և էական նպատակն է օանին միջին կրթութութիւն տալով՝ նախապատրաստել բարձրագոյն մասնագիտական կրթութեան համար, ուստի և այդ դպրոցների շրջանաւարտների մեծագոյն տոկոսը բարձրագոյն դպրոցներում է լրացնում իր կրթութեան պակասը, միաժամանակ որ և է մասնագիտութեան մէջ խորանալով: Այն ծնողի համար, որի որդին մի գիմնազիա, մի ընկալական դպրոց է յաճախում, պարզ է, որ իր որդին աւարտելուց յետոյ պէտք է համալսարանում և կամ մի այլ տեղ մասնագէտ դառնայ, չի էլ կասկածում, որ իր որդին գիմնազիան աւարտելուց յետոյ կեանքի համար դեռ քիչ պատրաստութիւն ունի: Նոյն դրութիւնն է իշխում նաև մեր թեմական դպրոցներում և ձեմարանում: Մեր դպրոցականները ծնողները նոյն հոգեբանութիւնն ունին, նրանք և՛ս ենթադրում են, որ իրենց որդիները համալսարանով պէտք է լրացնեն կրթութեան թերին: Պարզ է, որ ոչս նրանք աւելի չափաւոր են իրենց պահանջների մէջ և ակամայից հարկադրուած են գոհանալու այն մըտքով, որ իրենց որդիները թեմականները աւարտելուց յետոյ գործնական կեանք պէտք է մտնեն: Եւ ահա այս կարիքին է, որ չեն ուզում բաւարարութիւն տալ թեմական դպրոցների վարիչները: Մեր թեմական դպրոցները զուտ միջնակարգ դպրոցներ չեն, այլ գործնական—միջնակարգ դպրոցներ: մեր կեանքը այս վերջին տիպի կարիքն ունի: Իսկ կեանքը իր պահանջներով աւելի արժէքաւոր է, քան միմիայն տեսականը սիրողի հոգազուրկ մտածումները: Ահա թէ ինչ ուղղութեամբ պէտք է աշխատեն թեմական դպրոցների բարեփոխութեամբ հետաքրքրող և կարող անհատները: Մեր դպրոցների վերաբացումից արդէն տարիներ են անցել, սակայն այս կարևոր հարցը դեռ նոյն իր կարգին քննութեան էլ չի դրուել: Թէև, ինչպէս նկարագրեցինք, դրանից է կախուած մեր թեմական դպրոցների կենսունակ դառնալու, և կեանքի մեջ դեր խաղալու հնարաւորութիւնը:

Այժմ տեղը չէ ըստ էութեան քննել այս խնդիրը և

տալ մի կարգաւորեալ ծրագիր, այլ ցանկացայ միմիայն մատնացոյց անել, թէ ինչ ձևով կարելի է նպաստել մեր դպրոցների բարեկարգմանը, դո՛ւնէ մի կողմից:

Պ. Էղիլեան.



### ՓՈՐՉՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

Պրոֆ. Էրնստ Մէյմանի «Եասախօսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» ուսերէն թարգմանութիւնից հիւսեց

Pessimist.

### Մի քանի խօսք հիւսողի կողմից

Չնայելով Կովկասահայերիս դպրոցներից մի քանիսը չուտով բոլորելու են իրենց գոյութեան հարկւրամեակը, այնուամենայնիւ մինչև այժմ՝ չունենք ոչ միայն կանոնաւոր, օրինակելի դպրոցներ, ծրագիրներ, այլ և մատների վրայ կարելի է հաշուել մեր քիչ թէ շատ պատրաստուած մանկավարժներին: Ինչ վերաբերում է մանկավարժական գրականութեանը, մեզանում այս կողմը յատկապէս անմխիթար պատկեր է ներկայացնում. զարմանալիօրէն որքան և անտեսական օրէնքի հիման վերայ պահանջի համեմատ պէտք է լրացնող միջոցներ արտագրել, այս դէպքում՝ մեզանում այս օրէնքն էլ չի գործադրում. դպրոցներ մենք ունեցել ենք և ունենք բաւական թիւով, դասատուներն էլ չեն պակասել, սակայն վերջիններս մեծ մասամբ միջնակարգ կրթութեան տէր մարդիկ լինելով, զուրկ են եղել տարրական մանկավարժական կրթութիւնից. ամեն մէկը երկար տարիներ աշխատելուց յետոյ հազիւ սեփական փորձի շնորհիւ որոշ հմտութիւն է ձեռք բերել. իսկ թէ մինչև փորձ ձեռք բերելը քանի սերունդ իւր անփորձութեանը զոհել, այդ մասին խօսելն աւելորդ